600.0009.27.01.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2016 թվականի №9Ա
քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն, որ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2016-2018 թվականների ներդրումային ծրագիրը կազմում է 44 869,1 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 11 084,5 մլն դրամը նախատեսվում է ներդնել 2016 թվականին՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում. 2016-2018 թվականների ընթացքում՝ 12 356,4 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 1 160,1 մլն դրամ,
   2) գազափոխադրման համակարգի վերակառուցում. 2016-2018 թվականների ընթացքում՝ 15 988,2 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 3 277,5 մլն դրամ,
   3) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2016-2018 թվականների ընթացքում՝ 1 495,1 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 713,2 մլն դրամ,
   4) նոր բաժանորդների միացում. 2016-2018 թվականների ընթացքում՝ 1 180,3 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 657,2 մլն դրամ,
   5) գազաբաշխման համակարգի վերակառուցում. 2016-2018 թվականների ընթացքում՝ 7 314,1 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 2 539,4 մլն դրամ,

6) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2016-2018 թվականների ընթացքում՝ 6 535,0 մլն դրամ, որից 2016 թվականին՝ 2 737,1 մլն դրամ:

2. Համաձայնություն տալ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2016-2018 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-6 հավելվածների:

3. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2017-2019 թվականների ներդրումային ծրագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 հունվարի 2016թ.
ժամը 16^{00}